Ա. Գ. Ազաևը ընդգծում է, որ իդեալիստական փիլիսոփայությունը և սոցիոլոգիան ֆետիշացնում են ազգային ինքնագիտակցության սանձարձակ ուժը՝ կտրելով նրան իրականությունից, այն սրյունից, որի արտացոլումն ու ծնունդն է նա։ Ավելին՝ բուրժուական գաղափարախոսությունը «ազգը» դուրս է բերում «ազգային ինքնագիտակցությունից» ասելով, թե այդ ինքնագիտակցությունը իրենից ներկայացնում է ազգի բոլոր դասակարգերի խնդիրների, շահերի, աշխարհայեցողության միասնությունը։ Մինչդեռ մարքսիզմի համար ազգային ինքնագիտակցությունը դա դասակարգերի, անհատների իմացումն է ազգի՝ որպես կապիտալիստական և սոցիալիստական գարաշրջանների հասարակական զարգացման անխուսափելի ձևի, որպես համաշխարհային արենայում հանդես եկած ինքնուրույն ուժի։ Ազգային գիտակցությունը միաժամանակ արտահայտում է մարդու վերաբերմունքը (այն դասակարգի միջոցով, որին նա պատկանում է) դեպի ազգը։

Ա. Գ. Ազաևը ազգի էությունը տեսնում է դեպի ինքնուրույնությունը, դեպի սուվերենիտետը նրա ձգտման մեջ։ Ելակետ ունենալով այս բոլորը, նա առաջարկում է «ազգ» հասկացության հետևյալ սահմանումը. «Ազգը դա կապիտալիստական և սոցիալիստական գարաշրջանների էթնիկական ընդհանրություն է (որը բնութագրվում է լեզվի, տերիտորիայի, տնտեսության, կուլտուրական կյանքի և ազգային ինքնագիտակցության ընդհանրությամբ)՝ արթնացած ինքնուրույն ազգային կյանքի, սուվերենիտետի։ Հեղինակը նշում է, որ ազգի սահմանման այս բովանդակությունն է նշում XXII համագումարի կողմից ընդունված նոր ծրագիրը։

Բանավեճի ընթացքում քննարկվեց նաև ազգի տեսակի հարցը։ Պ. Մ. Իոզաչովը և Մ. Ա. Սվերդլիևը առաջարկեցին հրաժարվել «բուրժուական ազգ» և «սոցիալիստական ազգ» սահմանումներից և ընդունել երեք տեսակի ազգեր՝ սոցիալական անմիատարր, միատարր և անցնդիկ ազգեր։ Նրանք գտնում են, որ «բուրժուական ազգ» հասկացությունը ազգին բնութագրում է նախ՝ միակողմանի և պարզունակ ձևով, ազգը վերածելով միայն արտադրական հարաբերությունների և մի կողմ թողնելով ազգի հատկանիշների փոխհարաբերությունների դիալեկտիկան ու ազգի հարաբերական ինքնուրույնությունը։ Երկրորդ՝ «բուրժուական ազգ» հասկացությունը երկիմաստ է, որովհետև դրա գործածումը հնարավորություն է տալիս չափազանցելու բուրժուազիայի դերը ազգային կյանքում և կարող է սխալ եզրակացությունների բերել։ Այս առաջարկության դեմ շատերն արտահայտվեցին։ Հիմնական առարկությունն այն է, որ ազգերի պատմական տեսակը պայմանավորվում է հասարակության մեջ տիրապետող արտադրական հարաբերություններով։ Այնուհետև, բուրժուական ազգի կյանքում գերակշռող դերը դրավում է բուրժուազիան, նրա քաղաքականությունը և գաղափարախոսությունը։ Վերջապես, «բուրժուական ազգ» հասկացությունը նույնչափ օրինական է, որչափ «բուրժուական հասարակություն» հասկացությունը։ Բուրժուական ազգը բոլորովին էլ չի բացառում, այլ ընդհանրացնում է տվյալ ազգի անտագոնիստական սոցիալական կառուցվածքը (երկու ազգ — երկու կուլտուրա), սոցիալիստական ազգերը սոցիալապես միատարր չեն։ Միատարրություն կստեղծվի կոմունիզմի ժամանակ։

«Ազգ» հասկացության շուրջը ծավալված այս բանավեճը պատահականության արդյունք չէր, այլ՝ կյանքի պահանջ։ Մեր դարաշրջանը անխուսափելիորեն առաջադրում է ազգերի, այդ թվում և սոցիալիստական ազգերի հետագա զարգացման ուղիների և կոնկրետ հեռանկարների հարցը։ Իսկ դրա լուծման համար պետք է հստակ պատկերացում ունենալ «ազգ» հասկացության էության մասին, այդ թվում և սոցիալիստական ազգերի էության մասին։

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՑԱՎԱՆ ԱՄՐՈՑԻ 1963 ԵՎ 1965 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Գառնիի հնագիտական արշավախմբի ջոկատը իր աշխատանքները շարունակեց Հացավանի հին ամրոցում, նպատակ ունենալով ուսումնասիրել ամրոցի տերիտորիան և պարսպի հարավային հատվածը։ Ամրոցում կատարված հետախուզական աշխատանքների և սիստեմատիկ պեղումների առաջին տարիների ընթացքում պարզվել

1 Պեղումներին մասնակցել են համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողներ Դ. Ղարիբյանը և Հ. Ասմարյանը (1963 թ.) և հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ասպիրանտ Ա. Քալանթարյանը (1965 թ.)։ Ձափագրական աշխատանքները կատարել է ճարտարապետ Կ. Ղաֆաղարյանը, լուսանկարչական աշխատանքները՝ Գ. Ժամկոչյանը և Ա. Շահինյանը։

էին պարսպի շրջագծի երեք կողմերը, կիսակլոր աշտարակներով և քառանկյունի աշտարակաձև ելուստներով՝ կոնտրֆորսներով հանդերձ։ Պարսպի հարավային հատվածում, որը հավանաբար ավելի շատ էր ավերման ենթարկվել, բացվել էին երկու կոնտրֆորսներ՝ նրա միջին մասում և պատի հետքեր՝ արևմտյան ու արևելյան ծայրում։

Երկու հայտնի կոնտրֆորսներից շարժվելով դեպի արևմուտք, հնարավոր եղավ պարզել պարսպագծի մոտ 15 մ երկարություն ունեցող այս մասը։ Այստեղ բացվեցին երկու նոր կոնտրֆորսներ (երկարությունը 3,25 և 2,50 մ, խորությունը 1,25—1,90 մ և 1,30—1,40 մ, նկ. 1)։

Հարավային հատվածի միջին մասում նախորդ տարիներում բացված երկու կոնտրֆորսներից դեպի արևելք պարիսպը նույնպես շարունակվում է։ Այստեղ ևս պահպանվել էին ներքևի շարքերը միայն. տեղ-տեղ անհրաժեշտ էր առաջնորդվել հիմքերով։ Նոր բացված հատվածը ունի մոտ 9,35 մ երկարություն և ընդհատվում է առանց միանալու հարավային պարսպի արևելյան անկյունային մասին։ Նոր հատվածում բացվել է մի կոնտրֆորս (երկարությունը 2,45 մ, խորությունը 1,20—1,35 մ), որով աշտարակաձև ելուստների թիվը, պարսպի հարավային՝ համեմատաբար կարճ դծի վրա, հասնում է վեցի։ Նման հաճախականությունը բացատրվում է ամրոցի հարավային մատույցների մատչելիությամբ։ Հարավային կողմից է դալիս Հացավան գյուղից դեպի բարձունքը տանող միակ ճանապարհը։



Նկ. 1։

Հարավային պարսպի նորահայտ այս հատվածը ընդհուպ մոտենում էր արևմտյան պարսպին։

Նրա արտաքին երեսը պահպանվել է երեք շարք բարձրությամբ, կազմված միջին չափերի անմշակ լեռ քարերից։ Տեղ-տեղ շարքի մեջ հանդիպում են նաև ավելի մեծ քարեր՝ մինչև 1,20 մ երկարությամբ։

Պարսպի եզրագծի հարավ-արևմտյան անկյունում, որը խճճված հանգույցի տպավորություն էր թողնում, ուրվագծվեցին քառանկյունի աշտարակի հետքեր։

Աշտարակը իր մի երեսով կապվում է արևմտյան պարսպի հետ, մյուսը, կազմելով մի անկյունավոր գիծ, շարունակվում է դեպի արևելք և ընդհատվում հարավային պարսպի ա-

---

2 Նախորդ տարիների պեղումների հաշվետվությունները տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1962, № 11 և 1963, № 12։

ռային կոնտրֆորսի մոտ։ Այսպիսով պարզորոշ երևում է, որ աշտարակը ընկած է եղել հարավային պարսպագծից դուրս, կոչված լինելով պաշտպանելու ամրոցի հարավ-արևմտյան անկյունը։ Այն դեռ լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի, բայց արդեն հավանական է, որ այստեղ էր գտնվում ամրոցի միակ մուտքը։

Ամրոցի ներսում բացվել են սենյակների բազմաթիվ պատեր, որոնք կապվում են իրար հետ և ձայնակցում նախորդ տարիներում երևան եկած պատերին՝ ներդաշնակելով նաև պարիսպների եզրագծի հետ։ Այս հանգամանքը օգնում է որոշ օրինաչափություններ պարզել սենյակների ուրվագծվող սիստեմում։

Դեռևս նախորդ տարիներին բացվող արևելքից արևմուտք ձգվող հիմնապատը շարունակվեց դեպի արևմուտք, կարծես բաժանելով ամրոցի սենյակների հյուսիսային կոմպլեքսը մնացած տերիտորիայից։

Աշխատանքները տարվել են պայմանական անուն ունեցող երեք տեղամասերում՝ հյուսիսային, կենտրոնական և արևմտյան։

Հյուսիսային տեղամասում, որը ընդգրկում է հյուսիսային պարսպին ներսից հարող տարածությունը, նախորդ տարիներին կիսաշրջանաձև միջի։ աշտարակին կից բացվել էր քառակուսի մի սենյակի մուտքը հարավային կողմից։

Աշտարակի պեղումները ցույց տվեցին, որ այն համատարած շարվածք չէ (Նկ. 2)։ Այստեղ գտնված խեցեղենը և այլ առարկաների բեկորները վկայում են, որ այն բնակեցված է եղել և լաոակուսի սենյակի հետ մի ամբողջություն է կազմել։ Կիսակլոր աշտարակի երկու ծայրերին հայտնաբերված քարե սյան հիմքերը վկայում են, որ աշտարակի ծածկը հենվել է նաև փայտե սյուների վրա, ավելի ճիշտ սյուներից սյուն ձգվող հորիզոնական գերանի վրա։

Հիմնական աշխատանքները այս տեղամասում, սակայն, տարվել են նշված սենյակից արևելյան և արևմտյան ուղղությամբ, պարսպի երկարությամբ։

Արևելյան ուղղությամբ բացվել է հյուսիսային պարսպի միջին և արևելյան աշտարակների միջև ընկած հատվածի ներսի երեսը մոտ 11 մ երկարությամբ։ Ինչպես գրսի, այնպես էլ ներսի մասում պահպանվել էր քարերի վեց շարք, մոտավորապես 2,40 մ ընդհանուր բարձրությամբ։ Այսպես կոչված արսիդավոր սենյակի արևելյան պատը, որը ուղղահայաց է պարսպին և որը հնարավոր եղավ ավելի հանգամանորեն ուսումնասիրել, երկու շինարարական տարբեր փուլերի արդյունք է երևում։ Ներքևի պատում (լայնությունը 1,07 մ), պահպանվել է քարե երեք շարք, 0,60 մ բարձրությամբ, և պարսպին մոտ տեղադրված դռան բացվածք (լայնքը 1 մ)։ Այս պատի մնացորդների վրա շարված է եղել երկրորդ, ավելի ուշ ժամանակաշրջանի մի պատ, նույնպես պահպանված։ Այն իր արևելյան եզրով կանգնած է մոտ 0,60 մ հաստության հողի շերտի վրա, մյուս եզրով



Նկ. 2։

ստորին պատի վրա և անցնում է դռան բացվածքի վրայով։ Ներքևի պատից դեպի արևելք պարսպի տակ մոտ 2,40 մ խորության վրա տեղ-տեղ պահպանվել է սենյակի հատակը, կազմված բնական թերթաքարային հիմքի վրա փռված և տոփանված մոտ 2 սմ հաստություն ունեցող կավե շերտից։

Դռան բացվածքում և պարսպի տակ գտնվել են գերանի բեկորներ, փտած վիճակում։ Այս տեղում գտնվեց նաև տուֆե մի վեմ, հարթեցված չորս երեսով (չափսերը—1,13×0,25×0,30), որը կարող է պարակալ կամ շեմքի քար եղած լինել։

Արևմտյան մասում փաստորեն բացվել են երկու սենյակներ, որոնք անմիջականորեն հարում են հյուսիսային պարսպապատին, որի ներսի երեսը բացվել է մոտ 16 մ ընդհանուր երկարությամբ։

Սենյակներից մեկը քառանկյունի հատակագիծ ունի։ Դեռ նախորդ տարիներում պարզվել էր, որ նրա արևելյան պատը երկու շինարարական շրջանների արդյունք է։ Արևմտյան պատի վրա կա դռան բացվածք, հարավային պատի միայն մի երեսն է բացվել, հյուսիսայինը կազմում է հենց ինքը պարիսպը։ Այս սենյակի մեջտեղում հայտնաբերվեց սյան քարե հիմք։

Արևմուտքից հարող սենյակը, որը հողի միջից հայտնաբերված կարասի պատճառով մենք կանվանենք կարասով սենյակ, դեռ լրիվ բացված չէ. հայտնի են միայն նրա երկու պատերը։ Նրա հյուսիս-արևմտյան մասում, հյուսիսային պարսպին կից մի որոշակի կորություն ունեցող պատ է ուրվագծվում, որը լրիվ բացված չէ (նկ. 3)։ Այն, ըստ երևույթին, գնում միանում է արևմտյան պարսպին և հավանաբար ամրոցի ներսի՝ հյուսիս-արևմտյան անկյունը ամրացնելու նպատակով շարված մի հենապատ է։

Սենյակի արևելյան պատի մեջ դռան բացվածք կա, որը տանում է դեպի հարևան սենյակը։ Հետաքրքիր է, որ դուռը մոտ 1 մ բարձրության վրա շարված է երևում։ Շարի քարերը նստած են դռան բացվածքի մեջ լցված հողի վրա (նկ. 4)։ Այս պարզորոշ մի վկայություն է սենյակում երկրորդ՝ ավելի բարձր հորիզոնի գոյության մասին։ Այդ հաստատվում է նաև այլ փաստերով։

Սենյակի հարավ-արևմտյան մասում մի հին պատի հետքեր են բացվում (պատի բարձրությունը 0,80 մ)։ Նույն մակարդակի վրա, պատի մոտ, դրված է փոս ունեցող մի քար, որը հավանաբար գործածվել է տնտեսության մեջ։

Հանրագումարի բերելով այս դիտողությունները, կարելի է խոսել ամրոցի այս մասում շինարարական երկրորդ շերտի գոյության մասին։ Սենյակի հատակին արևելք-արևմուտք դիրքով ընկած էր մի գերան, մոտ 2,20 մ երկարությամբ, որը հավանաբար առնչվում է սենյակում գտնված սյան քարե հիմքի հետ։

Արևմտյան պարսպին կից, ներսից, երևան են եկել մի շարք պատեր, որոնք առայժմ իրար հետ քիչ են խոսում, թեպետ կապվում են պարսպի հետ։ Այս պատերից մեկը եղևնաձև շարվածք



Նկ. 3։

Նկ. 4։

ունի։ Սա ամրոցում հայտնաբերված երկրորդ պատն է, որ նման շարվածքով է կառուցված։ Եղևնաձև շարվածքով պատերը բնորոշ են վաղ միջնադարյան շինարարական տեխնիկայի համար, բայց հանդիպում են նաև ավելի վաղ անտիկ ժամանակաշրջանում (Ղրիմ, Վրաստան)։ Կենտրոնական մասում մի քառանկյունի սենյակ է բացվել, որի երեք պատերը լրիվ են հայտնաբերվել, իսկ չորրորդի միայն մի երեսն է հայտնի (պատերի երկարությունը 4,40—4,70 մ, հաստությունը 0,80—1 մ, պահպանված բարձրությունը —1,10 մ)։

Պեղումների ընթացքում գտնվել են բազմաթիվ առարկաներ ինչպես ամրողջական ձևով, այնպես էլ բեկորներով։ Խեցեղենը ներկայացված է սև խոհանոցային և կարմրավուն՝ տնտեսության մեջ կիրառություն գտնող կավանոթների բեկորներով։

Առանձին խմբեր են կազմում բաց դույնի անգորով պատած, մ. թ. առաջին դարերի խեցեղենը հիշեցնող բեկորները, սաների օգնությամբ արած ալիքավոր զարդերով և զուգահեռ ակոսներով վաղ միջնադարյան տիպի բեկորները, հելլենիստական ժամանակաշրջանին հատուկ դունազարդ բեկորները (այդ թվում մեկը ալիքավոր զարդերով, Դվինի նույնատիպ խեցեղենը հիշեցնող), ինչպես նաև կարմրավուն ըմպանակների բեկորները։ Ուշադրության արժանի է կապտավուն, անթափանցիկ, վաղ տիպի ջնարակով պատած կավանոթի մի բեկոր, որը գտնվել է մոտ 1,70 մ խորության վրա։

Լավ են ներկայացված հաստապատ կարասների պսակները, որոնք մի քանի տիպի են։ Մի կարաս, հատակի մեջ թաղված, հայտնաբերվել է հյուսիս-արևմտյան սենյակում (նկ. 5)։ Կա-

Նկ. 5։

բասի բարձրությունը 1,10 մ է, ամենալայն տրամաչափը՝ 0,80 մ։ Կարասի հատակը սրածայր է, շրթերը վատ են պահպանվել։ Կարասը ծածկված է եղել քարե (տուֆ) կլորավուն խփով (տրամաչափը 0,45—50, հաստությունը 0,10 մ), որը ջարդելով կարասի շրթերը ընկել էր կարասի մեջ։ Կարասը լցված էր հողով։ Միջից դուրս եկավ մի հաստ կանաչավուն ապակու բեկոր, հղկված, էլիպսաձև և կլոր զարդերով, երկու դոտեզարդ կավանոթի բեկոր, կարմիր գույնի կավե ըմպանակի բեկոր և այլն։

Միջին կիսակլոր աշտարակում համարյա թի հատակին գտնվեց սև գույնի տանձաձև մի սափոր (բարձրությունը 15,5 սմ, տրամաչափը 11 սմ), որի վզին և ուսերի վրա հազիվ նկատվում են հորիզոնական գծերը (նկ. 6)։

Նկ. 6։

Այս սափորը իր որոշակի զուգահեռներն ունի Ուրբնիսիի վաղ միջնադարյան շերտերում հայտնաբերված կավանոթների մեջ[3]։

Գտնվեցին նաև նախորդ տարիներից հայտնի եղևնաձև զարդերով պատած ռելիֆ դոտիներ ունեցող կարասի նոր բեկորներ։

Հիշատակության արժանի են քարե մի փոքր տուփի բեկորը, ինչպես նաև քարե թասերի բեկորները, որոնք լայն տարածում էին գտել հատկապես վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանում (նկ. 7)։

Հայտնաբերվել են հաստ ապակու բազմաթիվ բեկորներ կլոր ձևի և օվալաձև տաշված զարդերով (նկ. 7, 8)։ Սրանք, որպես կանոն, հանդիպում են ամրոցի ստորին շերտերում։ Նախորդ տարիներում գտնված շրթի և պատերի մասերը թույլ են տալիս ենթադրելու, որ հիշատակված բեկորները պատկանում են ուղիղ շրթեր ունեցող կիսագնդաձև թասերին։ Ապակյա նման թասերը թվագրվում են ուշ անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջանով։

Տաշվածքներով, հղկումներով և փորագրություններով զարդարված ապակիների հայրենիքը ընդունված է համարել Եգիպտոսը և հատկապես Սիրիան ու Միջագետքը։ Այս վերջին երկրամասում ապակու մշակումը սաոը եղանակով հայտնի էր հավանարար գեռևս Ասորեստանի ժամանակներից[4]։

Վերոհիշյալ երկրներից այս տեխնիկան մ. թ. առաջին դարերում տարածվում է նաև ապակեգործության արևմտյան կենտրոններում։ Ապակյա անոթների պատերը հարդարող տաշվածքները օվալաձև էին կամ կլոր ձևի. սրանք կամ իրար էին հարում կամ իրարից որոշ, թեպետ և շնչին, հեռավորության վրա էին գտնվում։

Օվալաձև տաշվածքներով և այլ զարդերով տանձաձև անոթ գտնվել է Դաոնիում և թվագրվում է մ. թ. III դարով։

Գաոնիում են հայտնաբերվել նաև հաստ ապակու կտորներ օվալաձև տաշվածքներով ու նեղ փորվածքներով, ինչպես և վեցանիստ իրար հարող տաշվածքներով, որոնք թվագրվում են III և IV դարերով։ Նպատակ չունենալով քննարկել նման հարդարանք ունեցող անոթների բոլոր ձևերը, համառոտակի կանգ կառնենք մ. թ. II—IV դարերի կիսագնդաձև թասերի վրա, որոնք կարող են որոշ առնչություն ունենալ Հացավանում գտնված նույնատիպ թասերի բեկորների հետ։ Թասերի մի խումբը իր հարդարման մոտիվներով անկասկած համեմատման ենթակա չէ մեր ունեցած նյութի հետ, չնայած պատերի ներքևի կեսը ունի կլոր կամ օվալաձև տաշվածքներ։ Ի տարբերություն Հացավանի բեկորների, նրանց վերևի կեսը զարդարված է երկարավուն, նեղ փորագրություններով, հորիզոնական կամ ուղղահայաց ձևի[5]։

---

[3] Л. А. Чилашвили, Городище Урбниси, Тбилиси, 1964, տխտ. XXXII — կանթով, տխտ. XLII, 1 անկանթ, տե՛ս նաև Վրաստանի պատմական թանգարանի ցուցադրության վաղ միջնադարյան խեցեղենը։

[4] A. von Saldern, Achaemenid and sassanian cut glass. „Ars Orientalia". 1963, հատ. 3, էջ 14—26.

[5] F. Fremersdorf, Römische Glaser aus Köln. Köln, 1928, նկ. 33։ Նույնի՝ Figürlich geschliffene Gläser, Berlin, 1951, տխտ. 16, 17, 18. D. B. Harden, Roman glass from Karanis, Ann Arbor, 1934, № 317; C. W. Clairmont, The glass vessels, New Haven, 1963 (The Excavations at Dura-Europos), տխտ. XXV, նկ. 2. 3; W. B. Honey, Glass, London, 1956, նկ. ४г; Н. П. Сорокина, Стеклянный сосуд из нижнего Поднестровья, КСИИМК, 1962, вып. 89, рис. 40,5; Е. М. Алексеева, Г. М. Арсеньева, Стеклоделие Танаиса, С. А., 1966, № 2, նկ. 1, 3, նկ. 3, 4, 8, 11.



Նկ. 7։

Նկ. 8։

Թասերի մի այլ խմբի պատերը, շրթերի տակից սկսած մինչև հատակը, ունեն կլորավուն տաշվածքներից կազմված շարքեր[6], սակայն նախորդ թասերի նմանությամբ սրանք կիսագնդաձև թասերի որոշակի ձևի են պատկանում քիչ դուրս ցցված շրթերով և թեթևակիորեն նեղացող վզով, որով տարբերվում են Հացավանի թասերի վերականգնվող պրոֆիլներից։

Ճիշտ է, մեզ հայտնի է թասերի մի երրորդ խումբ ևս, որը ընդհանուր ձևով և տաշվածքների առանձնահատկություններով նմանվում է Հացավանի նյութերին[7]։ Սակայն այդ թասերի թվագրության հարցում գոյություն ունեցող անորոշությունը, ինչպես և ապակու տարբերվող հաստությունը, գույնը և որակը դժվարացնում են նրանց լիարժեք օգտագործումը քննության առնված բեկորների ուսումնասիրման գործում։ Տաշված, հղկված և փորագրված ապակիների արտադրանքը շարունակվում է նաև վաղ միջնադարյան ժամանակաշրջանում և հատկապես Արևելքում։ Նախորդ, անտիկ ժամանակաշրջանի համեմատությամբ ընդհանուր ձևերի մեջ նկատ-

[6] F. Fremersdorf, Romische Gläser aus Köln, Koln, Leipzig. 1939. տխ. 36, C. W. Clairmont, ուշգ. աշխ., տխտ. XXV, XXVII, նկ. 4.

[7] Е. Г. Пчелина, Два погребения времени алано-хазарскои культуры из селения Лац. Труды секции археологии Российской ассоциации научно-исследовательских институтов общественных наук, IV, 1928, նկ. 2; Г. М. Ваидов, Раннесредневековое городище Судагилан (Мингечаур), КСИИМК, 1954, № 54, նկ. 59, 5; К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, նկ.4, էջ 81; Р. Б. Ахмеров, Стеклянный сосуд из Уфимского погребения, С. А., 1958, № 4, նկ. 1, էջ 218.

վում է բազմազանության որոշ նվազում, սակայն կիսագնդաձև թասերը էլ ավելի լայն տարածում են գտնում։ Ինչ վերաբերում է կլոր, օվալաձև կամ վեցանիստ տաշվածքներին, ապա նրանք, ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, կամ հարում են իրար, կազմելով մեղրախորիսխաձև մի զարդ, կամ իրարից փոքր-ինչ հեռավորության վրա են գտնվում։

Նման զարդերով կիսագնդաձև թասեր հայտնի են բազմաթիվ տեղերում, բայց նախ և առաջ Մերձավոր Արևելքում։

Այսպես, օրինակ, Միջագետքի Կիշ քաղաքի վերին շերտում սասանյան արքա Վահրամ Գուրի (մ. թ. 420—438) պալատի փլատակներում գտնվել են կիսագնդաձև և այլ ձևի թասեր, որոնց պատերը կլոր տաշվածքներ ունեն զրսից (նկ. 9)[8]։ Այս ապակին թվագրվում է VI դարով[9]։

Համոզեցուցիչ զուգահեռներ են տալիս նաև Դվինի վաղ միջնադարյան[11], ինչպես և Ուրբնիսի VI—VIII դարերով թվագրվող շերտերը[12]։ Մեծ, հաստապատ թասեր, խորիսխանման տաշվածքներով հայտնի են Ամլաշից (Իրան), Տիզրոնից (Միջագետք), Ծապոնիայից (իրանական ծագում ունեն), Բարելոնից և թվագրվում են V—VIII դարերով[13]։

Գյուտերի տեղաբաշխման քարտեզը ցույց է տալիս, որ նման թասերը կապված են ավելի շատ ժամանակակից Իրանի և Իրաքի տերիտորիաների հետ, մի հանգամանք, որը մասնագետներին թույլ է տալիս այդ երկրներում փնտրել սասանյան ժամանակաշրջանի ապակեգործական կենտրոնները, որոնք շարունակում էին հին արևելյան և անտիկ ժամանակաշրջանի ավանդները[14]։ Նման պայմաններում բացառված չէ, որ Հայկավանի ամրոցում գտնված տաշվածքներով հարդարված բեկորները, եթե նրանք Հայաստանի տեղական արտադրանքի արգասիքը



Նկ. 9։

Ծապոնական հնագիտական արշավախմբի կողմից Իրանի հյուսիսում, Գիլանում հայտնաբերված նման տաշվածքներով կիսագնդաձև թասերը թվագրվում են պարթևական կամ սասանյան ժամանակաշրջանով[10]։

---

[8] D. B. Harden. Glass from Kish, Iraq, հ. I. մաս 2-րդ, 1931. նկ. 1, 6—9։

[9] Նույն տեղում, էջ 131—132։

[10] R. Ghirshman. Persian art. The Parthian and Sassanian dynasties. New York, 1962, նկ. 292 B.

[11] Հ. Հ. Կալանտարյան. Материальная культура Двина V—VIII вв. (Автореферат канд. дисс.), Ереван, 1966, էջ 19։

[12] Լ. Ա. Չիլաշվիլի. նշվ. աշխ., նկ. 53։

[13] A. von Saldern. նշվ. աշխ., տիտ. 3, նկ. 6 և էջ 10—12; C. J. Lamm. Mittelalterliche Gläser und Steinschnittarbeiten aus dem Nahen Osten. Berlin, 1929, 1930. տիտ. 54, 1, 5; R. Ghirshman. նշվ. աշխ., նկ. 113.

[14] A. von Saldern. նշվ. աշխ., էջ 14—16։

չեն, ներմուծվել են Սասանյան Իրանի տերիտորիաներից Դվին և այնտեղից փոխադրվել Հացավան։ Այդ բեկորների ուսումնասիրման նշանակությունը մեծ է, որովհետև եթե Իրանի և Միջագետքի տերիտորիայում հայտնաբերված սասանյան ժամանակաշրջանի ապակին կապող օղակ է հանդիսանում անտիկ և վաղ իսլամական ապակեգործության միջև, ապա Հայաստանի նույն ժամանակի ապակին, որ հայտնաբերված է Դվինում և Հացավանում, լրացնում է այն բացը, որը գոյություն ունի Հայաստանի անտիկ և զարգացած միջնադարի ապակեղենի միջև ընդհանրապես և տաշվածքներով զարդարված ապակեղենի միջև՝ հատկապես[15]։

Զարգացած միջնադարի, թեկուզ և նրա սկզբնական շրջանի, X—XI դարերով թվագրվող տաշվածքներով զարդարված ապակեղեններ գարդերի ձևի և նրանց դասավորության տեսակետից (կլոր, օվալաձև, վեցանիստ տաշվածքներ, խորիսխանման կամ առանձին-առանձին կանգնած) որոշակի նմանություն ունի նախորդ, վաղ միջնադարյան ապակյա անոթների հարդարանքի հետ, թեպետ այդ նույնը չի կարելի ասել անոթների բուն ձևերի մասին, որոնք ենթարկվել էին զգալի կերպարանափոխման։ Կիսագընդաձև թասը ամենայն հավանականությամբ դուրս է մղվում արտադրությունից այս ժամանակաշրջանում։ Տաշվածքներով հարդարված անոթներ կամ նրանց բեկորները հայտնի են մերձավորարևելյան կենտրոններից (Իրան, Իրաք, Եգիպտոս), ինչպես նաև Հայաստանից (Դվին)[16]։

Հացավանում գտնվել են մի շարք երկաթյա առարկաներ և բրոնզյա անորոշ իրերի բեկորներ։

Տեգի ծայրը սնամեջ կոթառով զենքի առաջին նմուշն է Հացավան ամրոցից (նկ. 7)։ Երկաթե դանակը իր նմանն ունի Դվինի վաղ միջնադարյան նյութերի մեջ (նկ. 8)։ Հանդիպում են նաև կարասի խփեր տուֆից, կղմինգրի բեկորցածր եզրով, քարե փոքր անիվ, քարե զարդարուն կոճակ և այլն։ Բոլոր այս նյութերը բնութագրում են շարքային բնակավայրի նյութական մշակույթը իր տարբեր կողմերով, բացահայտում նրա անմիջական կապերը երկու մերձավոր կենտրոնների՝ Գառնիի և Դվինի հետ։

Կարևոր են թվում ստուգված շերտագրական տվյալները, հատկապես շինարարական կարգի։ Ոչ բոլոր նյութերն է հաջողվում կապել այս կամ այն ժամանակագրական փուլի հետ։ Սակայն երկու կարևոր խումբ, մեկը ուշ անտիկ, մյուսը վաղ միջնադարյան, այժմ հնարավոր է առանձնացնել։ Նյութերի մի երրորդ՝ հելլենիստական ժամանակաշրջանի խումբ, ներկայացված է գունազարդ և հասարակ խեցեղենի, քարե թասերի բեկորներով։ Առայժմ դժվար է բավարար բացատրություն տալ Հացավան ամրոցում այս նյութերի (մ. թ. ա. III—I դարերի) առկայության վերաբերյալ։ Նման պայմաններում որոշվում են ամրոցի ժամանակագրական սահմանները մ. թ. III—IV և V—VI դարերի միջև։

Հետաքրքիր է նշել, որ ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքում գտնվել է Հացավանում նաև 1966 թ. պեղումների ժամանակ։

Շրթի և պատի պահպանված մասերը վկայում են, որ այդ բեկորը ամենայն հավանականությամբ պատկանում է կիսագնդաձև թասին. Շատ բնորոշ է ապակու բեկորի հարդարանքը տաշված և անտաշ շրջանակներից շրջակենտրոն դասավորությամբ։ Նման մոտիվները ըստկրզրնավորվում են անտիկ ժամանակաշրջանում և հանդիպում են Հռենոսյան մարզում, Սարդիսում, Դուրա — Եվրոպոսում (տե՛ս F. Fremersdorf, Figürlich geschliffene Glaser, Berlin, 1956, *տխտ.* 18, 3; A, von Saldern, Glass from Sardis, American Journal of Archaeology, *հատ.* 66, № 1, 1966, *տխտ.* 5, *նկ.* 6, *տխտ.* 8, *նկ.* 6b, D. B. Harden, Roman glass from Karanis, Ann Arbor, 1934, № 774; C. W. Clairmont, *նշվ. աշխ.*, *տխտ.* XXVI.

Սակայն այսպիսի մոտիվներով հարդարված հաստապատ թասերի ամենալայն տարածման ժամանակաշրջանը վերաբերում է վաղ միջնադարին։

Կիշի արդեն հիշատակված սասանյան հուշարձանի լավ թվագրվող նմուշները, Սուզայի սասանյան կամ վաղ իսլամական շրջանի թասի խոշոր բեկորը ունեն նման շրջակենտրոն զարդեր (տե՛ս D. B. Harden, Glass from Kish, Iraq, *հատ.* 1, *մաս* 2, 1934, *նկ.* 4; 10, 11, *նկ.* 5, 12, 13. M. Dieulafoy, L'acropole de Suse, *մաս* III—IV, Paris, 1893, *նկ.* 290, *էջ* 432; C. I. Lamm, Das Glas von Samarra, Berlin, 1929, *նկ.* 46, 47, 48) և օգնում են Հացավանի բեկորի ճիշտ թվագրմանը։

Նման մոտիվները արդեն ուլեֆ տեսքով հանդիպում են Մերձավոր Արևելքի ապակեղենի վրա VI—X դարերում։ Տե՛ս C. I. Lamm, Mittelalterli che Glaser und Steinschnittarbeiten aus dem Nahen Osten, *տխտ.* 52, 54, 3, 57, 10, 59, 19.

[15] Վաղ միջնադարյան ապակու մի բեկոր գտնվել է Հացավանում նաև 1966 թ. պեղումների ժամանակ։

[16] C. I. Lamm, Glass from Iran, Stockholm, London, 1935, *տխտ.* 30; H. B. Honey, Glass, London, 1956, *նկ.* 14C; C. I. Lamm, Mittelalterliche Glaser und Steinschnittarbeiten aus dem Nahen Osten, *տխտ.* 53, 8։

քի ռադիոածխածնային լաբորատորիային ներկայացված գերանի բեկորը, ամրոցի աբսիդավոր սենյակի արևելյան պատի դռան բացվածքից, թվագրվել է մ. թ. 500 թ. (±50 տարի)[17]։

Ինչ էլ որ լինի, Հացավանի հին ամրոցը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան ամրոցաշինարարության, կլոր աշտարակներով օժտված ամրոցների ծագման համար, ինչպես նաև քիչ ուսումնասիրված՝ ուշ անտիկ և վաղ միջնադարյան նյութական մշակույթի բնութագրման համար։

Գ. ՏԻՐԱՑՅԱՆ

ԹԵՂՈՒՏԻ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ (1965 Թ.)

Թեղուտի հանդամասը, որն ընկնում է էջմիածին քաղաքից երեք կիլոմետր հարավ, հնագիտություններ հայտնի էր որպես վաղ, միջին և ուշ բրոնզի ժամանակաշրջանի հետաքրքիր հուշարձաններ ունեցող վայր։

Վերջերս Թեղուտի հնագիտական կոմպլեքսը համալրվեց շատ արժեքավոր մշակութային նոր հուշարձանի հայտնաբերումով, որն իր տեսակի մեջ Սովետական Հայաստանի տերիտորիայում առայժմ միակն է։

Այդ նորահայտ բնակատեղին գտնվում է ՀՍՍՀ ԳԱ երկրագործական գիտահետազոտական ինստիտուտի փորձադաշտի հարավ-արևմտյան անկյունում, ոչ շատ բարձր բլրի վրա։ Բնակատեղին նախապես ունեցել է 2—2,5 հա տարածություն, իսկ այժմ նրա մի մասն է մնացել։

Բլրի մակերեսը ծածկված է 30—40 սմ հաստություն ունեցող ամուր կավաշերտով, որի տակ՝ 1—1,5 մ հաստության փխրուն կավահողի շերտում տեղավորված է աղյուսապատ և գետնափոր կացարանների հորիզոնը՝ նստած 2,5 մ հաստության գետային խճաքարի շերտի վրա, այնուհետև մայր հողն է՝ կավային նստվածքներով։

Ներտագրական տեսակետից կացարանները կառուցված կամ փորված են վերևից երկրորդ շերտի մեջ, Քասաղ գետի երկրորդ գետահունի վրա (այժմյան հունը չորրորդն է)։

Բնակատեղիի պեղված 8 կիսավեր և ամբողջական կացարանները մեկ առանձին կամ մի քանի կլոր հատակագծով բնակարանների կոմպլեքսներ են, որոնք տեղավորված են իրարից 5—7, որոշ դեպքերում՝ 0,7 մետր հեռավորության վրա։

Պեղված կացարանների ներքին տարածությունները լցված են մսխրի հետ խառնված փափուկ հողով, որի միջից հայտնաբերվեցին կայծքարե, վանակատե (օբսիդիան), բազալտե գործիքներ, ինչպես նաև ոսկրե ու խեցեղեն առարկաների բազմաթիվ բեկորներ։

Թեղուտի հյուղակները ունեն կլոր հատակագիծ՝ 2,6—3,5 մ տրամագծով, պատերը շարված են հարդախառն կավից պատրաստված ուղղանկյուն հարթ աղյուսի մի շարքով, որի հաստությունը չի անցնում 30 սմ-ից։ Աղյուսները ունեն 30×40×10 սմ չափեր։ Բնակարանների կից կառուցված են կլոր հատակագծով օժանդակ շինությունները (1,2—1,5 մ տրամագծով), որոնք ծառայել են որպես ըստեմարաններ հացահատիկ և այլ սննդամթերք ամրարելու համար։ Բնակարանների հատակները և պատերը ծեփված են հարդախառն կավաշաղախով, որի վրա երբեմն հանդիպում են կարմիր ներկի (օխրա) հետքեր (№ 1 կացարան)։

Ուշագրավ է այն, որ պեղված վայրում չհայտնաբերվեց բնակարանների գոնների կրնկաբարեր կամ այդ նպատակով օգտագործված որևէ մի իր, ինչպես նաև շինարարական գնալ։ Բնակարանների մուտքի համար որպես գուռ թերևս ծառայել է եզդնից, կաշվից կամ ծառի ճյուղերից գործած ծածկոցը։

Յուրաքանչյուր հյուղակի հատակին, կենտրոնական մասում, գրված էր միջին մեծության՝ աշխատանքից հարթված մակերեսով մի գետաքար, որի շրջապատում հայտնաբերվել են քարե և ոսկրե թերի մշակված գործիքների բազմաթիվ բեկորներ։ Շատ ուշագրավ են կայծքարի 13 անավարտ շեկրիկները, որոնք համատեղ հայտնաբերվել են № 7 կացարանում, վերը նշված քարի մոտ։ Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ աշխատանքային գործիքները պատրաստվել են կացարանի ներսում, հենց այդ քարի վրա։ Կացարանների մեջ կատարվող աշխատանքային պրոցեսների նման պատկեր են տալիս նաև Նախիջևանի Քյուլ-թափայի առաջին շերտի պեղումները, սակայն հնագետ Օ. Ա. Արիբուլաևը աշխատանքային այդ նախնական ոլորտները համարում է բնակարանի ծածկը պահող այսպես հենաքար[1]։

---

[17] Ленинградское отделение Института Археологии АН СССР, Радиоуглеродная лаборатория, образец ЛЕ—667, обр. 365.

[1] О. А. Абибулаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, «Советская археология», (այսուհետև՝ СА), 1963, № 3, էջ 158։